



Խնդիրների լուծման համար տրվում է 75 րոպե

3-4-րդ դասարաններ

- հաշվիչ օգտագործել չի թույլատրվում.
- յուրաքանչյուր խնդրի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը.
- չլուծված խնդրի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում.
- մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 96 միավոր.
- մրցույթի ավարտին խնդիրների թերթիկը մնում է մասնակցի մոտ.
- գլխավոր պահանջը մրցույթի մասնակիցներից և կազմակերպիչներից հանձնարարությունը ինքուրույն և ազնիվ կատարելն է:

3 միավոր գնահատվող խնդիրներ


1. Մենք օրվա ընթացքում ուտում ենք 3 անգամ: Քանի՞ անգամ ենք մենք ուտում շաբաթվա ընթացքում:

- (A) 7 (B) 18 (C) 21 (D) 28 (E) 37

2. Կենդանաբանական այգու տումսը մեծահասակի համար արժի 4 եվրո, երեխայի տումսը 1 եվրոյով ավելի էժան է: Քանի՞ եվրո պետք է վճարի հայրը իր երկու երեխաների հետ կենդանաբանական այգի մտնելու համար:

- (A) 5 (B) 6 (C) 7 (D) 10 (E) 12

3. Մենք սալիկներով հավաքում ենք պատկերների հաջորդականություն: Առաջին չորս պատկերներն ունեն համապատասխանաբար 1, 4, 7 և 10 սալիկներ: Քանի՞ սալիկ կունենա հինգերորդ պատկերը:



- (A) 11 (B) 12 (C) 13 (D) 14 (E) 15

4. Մարիամն իր մայրիկին, տատիկին, հորաքրոջն ու երկու քույրերից յուրաքանչյուրին տվեց մեկական փունջ ծաղիկներ: Պատասխաններում նշված ծաղիկփնջերից n-ը փունջն էր մայրիկի համար, եթե դու գիտես, որ՝

- քույրերի և հորաքրոջ ծաղիկները նույն գույնի են.
- տատիկը վարդեր չի ստացել:

- (A) դեղին կակաչներ (B) վարդագույն վարդեր
- (C) կարմիր մեխակներ (D) դեղին վարդեր
- (E) դեղին մեխակներ

5. Վեցուկես ժամ հետո կլինի ժամը չորսը կեսգիշերից հետո: Հիմա ժամը քանի՞ սն է:


- (A) 21:30 (B) 04:00 (C) 20:00 (D) 02:30 (E) 10:30

6. Անահիտն ունի 37 CD: Նրա ընկերուհի Լուսինեն ասաց. «Եթե քո CD-ներից 10 հատն ինձ տաս, մենք երկուսս էլ կունենանք նույն քանակով CD-ներ»: Քանի՞ CD ունի Լուսինեն:


- (A) 10 (B) 17 (C) 22 (D) 27 (E) 32

7. Քանի՞ աստղ կա պատկերի ներսում:

- (A) 100 (B) 90 (C) 95 (D) 85 (E) 105




8. Նանեն նկարել է կետ մի կտոր թղթի վրա: Նա հիմա նկարում է չորս ուղիղ գծեր, որոնք անցնում են այդ կետով: Քանի՞ մասի են այդ գծերը բաժանում թուղթը:



- (A) 4 (B) 5 (C) 6 (D) 8 (E) 12


4 միավոր գնահատվող խնդիրներ

9. Փոթորիկի պատճառով տանիքի առաջնամասում անցք է բացվել: Տանիքի վրա յոթ շարքից յուրաքանչյուրում կային 10-ական կղմինդրներ: Քանի՞ կղմինդր է մնացել տանիքի առաջնամասում:



- (A) 57 (B) 59 (C) 61 (D) 67 (E) 70

10. Արսենը ստանում է պատկերներ ցույց տրված երկու եռանկյունաձև քարտերով: Նշվածներից n-ը պատկերը նա չի կարող ստանալ:



- (A) (B) (C) (D) (E)

11. Դավիթը բազմապատկում է 3-ով, Սարգիսը գումարում է 2, իսկ Վարդանը հանում է 1: Ի՞նչ հերթականությամբ կարող են նրանք կատարել այդ գործողությունները 3 թվից 14 թիվը ստանալու համար:

- (A) Դավիթ, Սարգիս, Վարդան (B) Սարգիս, Դավիթ, Վարդան
- (C) Դավիթ, Վարդան, Սարգիս (D) Վարդան, Դավիթ, Սարգիս
- (E) Սարգիս, Վարդան, Դավիթ

12. Աջ կողմում դրված պատկերը Աննան հավաքել է 5 խորանարդներից: Նշված պատկերներից (ցանկացած կողմից նայելու դեպքում) n-ը մեկը նա չի կարող ստանալ աջ կողմում նշված պատկերից, եթե կարող է տեղափոխել միայն մեկ խորանարդ:








- (A) (B) (C) (D) (E)

13. Վահեն բարձրահասակ է Արմինեից և ցածրահասակ՝ Կարենից: Արամը բարձրահասակ է Գոռից և ցածրահասակ՝ Վահեից: Ո՞վ է ամենաբարձրահասակը:

- (A) Վահե (B) Արմինե (C) Գոռ (D) Արամ (E) Կարեն

14. Տրված պատկերներից ո՞րն է ավելի հաճախ կրկնվում տրված հաջորդականության մեջ:



- (A) միայն  (B) միայն  (C) միայն  (D)  և 
 (E) բոլոր պատկերները տրված են հավասարաչափ հաճախ

15. Հյուրանոցում քանի՞ երկու տեղանոց սենյակ է հարկավոր ավելացնել 5 հատ երեք տեղանոց սենյակներին՝ 21 հյուր ընդունելու համար:


- (A) 1 (B) 2 (C) 3 (D) 5 (E) 6

16. Սկավառակի վրա կա երեք երգ: Առաջին երգի տևողությունը 6 րոպե 25 վայրկյան է, երկրորդինը՝ 12 րոպե 25 վայրկյան, և երրորդինը՝ 10 րոպե 13 վայրկյան: Որքա՞ն է բոլոր երեք երգերի տևողությունը միասին:

- (A) 28 րոպե 30 վայրկյան (B) 29 րոպե 3 վայրկյան
 (C) 30 րոպե 10 վայրկյան (D) 31 րոպե 13 վայրկյան
 (E) 31 րոպե 23 վայրկյան

5 միավոր գնահատվող խնդիրներ

17. Մենք ունենք $1 \times 2 \times 4$ սմ չափի մեծ քանակի աղյուսներ: Փորձենք որքան հնարավոր է շատ աղյուսներ տեղավորել $4 \times 4 \times 4$ սմ չափի արկղի մեջ այնպես, որ կարողանանք նրա կափարիչը փակել: Քանի՞ աղյուս կտեղավորվի արկղի մեջ:




- (A) 6 (B) 7 (C) 8 (D) 9 (E) 10

18. Կենգուրուն նկատեց, որ ամեն ձմեռ նրա քաշն ավելանում է 5 կգ-ով, իսկ ամեն ամառ այն պակասում է 4 կգ-ով: Նրա քաշը հաստատուն է զարնանն ու աշնանը: 2008թ.-ի զարնանը նա կշռում է 100 կգ: Որքա՞ն է եղել նրա կշիռը 2004թ.-ի աշնանը:

- (A) 92 կգ (B) 93 կգ (C) 94 կգ (D) 96 կգ (E) 98 կգ

19. Լուսինեն երկու նետ կրակում է թիրախին: Նկարում տեսնում ենք, որ նա ստացել է 5 միավոր: Եթե ամեն կրակոցից երկու նետն էլ կպնեն թիրախին, քանի՞ տարբեր միավորներ կարող է ստանալ Լուսինեն:

- (A) 4 (B) 6 (C) 8 (D) 9 (E) 10



20. Քառակուսի պարտեզը բաժանված է լողավազանի (P), ծաղկաթմբի (F), փոքր մարգագետնի (L) և ավազե խաղահրապարակի (S) (տես նկարը): Մարգագետնին ու ծաղկաթումբն ունեն քառակուսի ձև: Մարգագետնի պարագիծը 20 մ է, ծաղկաթմբի պարագիծը՝ 12 մ: Ինչի՞ է հավասար լողավազանի պարագիծը:

| | |
|---|---|
| P | F |
| L | S |

- (A) 10 մ (B) 12 մ (C) 14 մ (D) 16 մ (E) 18 մ


21. Վահագնը ունի այնքան եղբայր, որքան քույր: Նրա քույր Անին ունի երկու անգամ շատ եղբայր, քան քույր: Քանի՞ երեխա կա այս ընտանիքում:

- (A) 3 (B) 4 (C) 5 (D) 6 (E) 7

22. Քանի՞ երկնիշ թիվ կա, որի աջ կողմի նիշը մեծ է ձախ կողմի նիշից:

- (A) 26 (B) 18 (C) 9 (D) 30 (E) 36

23. Խորանարդի նիստերից մեկը կտրված է իր անկյունագծերով (տես՝ նկարը): Նշվածներից ո՞ր բացվածքն է անհնար ստանալ:



- (A) 1 և 3 (B) 1 և 5 (C) 3 և 4 (D) 3 և 5 (E) 2 և 4

24. Տուփի մեջ կա 7 քար: 1-ից 7 թվերը գրված են այդ քարտերի վրա (միայն մեկ թիվ մեկ քարտի վրա): Առաջին իմաստունը տուփից վերցնում է կամայական 3 քար, իսկ երկրորդ իմաստունը՝ 2 քար: Տուփի մեջ մնում է ևս 2 քար: Առաջին իմաստունն ասում է երկրորդին. «Ես գիտեմ, որ քո քարտերի վրա գրված թվերի գումարը գույշ է»: Առաջին իմաստունի քարտերի վրա գրված թվերի գումարը հավասար է՝

- (A) 10 (B) 12 (C) 6 (D) 9 (E) 15



Մրցույթը կազմակերպվում և անց է կացվում «Այբ» կրթական հիմնադրամի կողմից: Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Կորյունի 19ա, հեռ՝ (+374 10) 54-37-07, էլ-փոստ՝ info@ayb.am, կայք՝ www.ayb.am